

**ԻՐԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ՁԻԱՆՈՒՆՆԵՐ  
ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՎ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**ԶԱՐՈՒՀԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Գրաբարում և միջին հայերենում ընտանի կենդանիների անվանումներից լեզվի յուրահատուկ իմաստային խմբերից են ձիանունները: Գրաբարի մատենագրությունը բավարար տեղեկություններ է տալիս իրանական ծագման ձիանունների մասին: Հարկ է նշել, որ գրաբարում դրանք ավելի շատ են («ձի» նշանակող 53 բառամիավորի  $\approx 34$  %-ը իրանական ծագում ունի), քան միջին հայերենում, որտեղ դրանց թիվն ակնհայտորեն պակաս է (48 բառամիավորի  $\approx 14$  %-ը)<sup>1</sup>:

Գրաբարում և միջին հայերենում վկայված իրանական ծագման ձիանունները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ ա) պարսկերենից փոխառած ձիանուններ (հնարավոր է հայերենում իմաստային դաշտի նեղացման կամ փոփոխության ենթարկված լինեն), բ) ձիանուններ, որոնք չկան պարսկերենում, սակայն բառը ստուգաբանորեն հանգում է իրանական արմատին (քանակային առումով դրանք սակավաթիվ են) և գ) ձիանուններ, որոնք կազմվել են հայերենի բառակազմական օրենքների համաձայն. բաղադրիչներից մեկը կամ բառարմատն անպայման իրանական ծագում ունի:

Գրաբարում և միջին հայերենում վկայված իրանական ծագման ձիանուններն են *աշխէտ, երաշխ, ասպ, ասպաստանիկ, բաշահատ, բոջոյ, գորգզան, երագաձի, երիվար կամ երիար, զարտակ, ճարտուկ, ձերմակ, մատակ, մատեան, նժոյգ, սեակ, ռահվար, սամանդ, տաճիկ, փալանիկ, քուռակ* բառամիավորները, որոնցից մի քանիսին կանդրադառնանք այս հոդվածի շրջանակներում:

Գրաբարում վկայված **աշխէտ** բառն ունի գունանվան նշանակություն: Եզրը «Բառգիրք հայկազգեան լեզուի» բառարանում (I, էջ 98) նշանա-

<sup>1</sup> Գրաբարում և միջին հայերենում ձիանվանական բառաֆոնդի քննության համար հիմք են ծառայել Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, Վենետիկ, 1837 (այսուհետև՝ ՆԲՀԼ), «Բառգիրք Հայկազգեան լեզուի», Ի Կոստանդնուպոլիս, 1844-1846 (այսուհետև՝ ԲՀԼ), Առձեռն բառարան հայկազգեան լեզուի, Վենետիկ, 1865 (այսուհետև՝ ԱԲ), **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, Եր., 1942-1962 (այսուհետև՝ ՀԱՁԲ), **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, Եր., 1971-1978 (այսուհետև՝ ՀԱԲ), **Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան, Եր., 2000 (այսուհետև՝ ԳԲ), **Լ. Խաչատրյան**, Գրաբարի բացատրական բառարան (Ձևաբանորեն տարարժեք բառեր), Եր., 2003 (այսուհետև՝ ԳԲԲ), **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, Եր., 2009 (այսուհետև՝ ՄՀԲ), **Լ. Հովհաննիսյան**, Գրաբարի բառարան, Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010 (այսուհետև՝ ՀԳԲ), **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010 (այսուհետև՝ ՀՄԲ) բառարանները:

կում է «գոյնաւորն այն, որոյ գոյնն առաւել հակի առ դեղնութի, քան առ կարմրութի. կամ խարտեշ. և կամ շիկագոյն. և կամ հրագոյն կարմիր»: «Նոր հայկազյան բառարանը» ևս հիշատակում է բառամիավորը «կարմիր դեղնագոյն, հրագոյն, բոցագոյն՝ որպէս ծիրան, նարինջ» (I, էջ 264) նշանակությամբ: ՆՀԲ բերում է նաև բառի «այթէշի, թուրիինձի, փօրթուգալի» հոմանիշները: Բառանունը նույն իմաստն ունի նաև ԱԲ-ում (էջ 101), որտեղ հանդիպում է նաև *աշխէտաձի*՝ «կարմիր գունով ձի» եզրը:

Հր. Աճառյանը «Հայերեն արմատական բառարան»-ում *աշխէտաձի*, *աշխէտութիւն* և *աշխէտանալ* (I, էջ 218) եզրերն է բերում (առանց վկայության):

Չին վկայված է Աստվածաշնչում. «...եւ ահա մի մարդ՝ հեծած մի աշխէտ ձիի վերայ, եւ նա կանգնել էր ձորումը եղող սրտենիների մեջտեղը. եւ նորա ետեւին կային աշխէտ, պիսակ ու սպիտակ ձիանք»<sup>2</sup>: Ղևոնդ Ալիշանը նույնպէս հիշատակում է եզրը. «Պատմաց և վիպաց մէջ յիշուած Ձիոց գոյներն (Սպիտակ, Աշխէտ, Ճարտուկ Ճանձկեն, Սեան գեղեցիկ), քիչ մայլ աւելի բարձրացրնեն այդ հիրավի ջքնաղ կենդանոյ պատիւր»<sup>3</sup>:

Բառամիավորն իրանական փոխառություն է հայերենում՝ Ավստ. լ. *xšāēta*- «փայլուն, պայծառ», պիլ. *xšēt*, որից է նաև վրց. *խսէղի* «աշխէտ ձի» բառամիավորը: Բառի պիլ. նոր ձևն է *šēt*, պրս. *šed* «արև, փայլ», որն իր սահմանափակ գործածությամբ տարբերվում է հիմնական գունանունների կիրառությունից՝ արտահայտելով միայն ձիու գույն. «Այր մի հեծեալ յաշխէտ ձի»<sup>4</sup>: Բառի նույն ստուգաբանությունն է տալիս նաև Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, 64):

Ասենք, որ ԲՀԼ-ում նույն նշանակությամբ ևս մեկ այլ ձիանուն է հանդիպում՝ *երաշխ*: Հր. Աճառյանը եզրն առանձին գլխաբառի տակ հարցականով է ներկայացնում՝ բերելով դրա եզակի գործածության դեպքը Գր. Մագիստրոսի «Թղթեր»-ում. «Ի ձի երաշխ արիւնագոյն հեծեալ գտէր ետես տեսողն» (ՀՄԲ, II, 39): «Արմատական բառարան»-ը հաստատում է բառի իրանական ծագումը՝ այն բխեցնելով *\*raxša*- նախաձևից < հիբ. *rauка, rauča*, Ավստ. *raoxšna* «փայլուն, փայլող»<sup>5</sup>, հմմտ. սնսկրտ. *rākṣā* «նյութ, որից կարմիր գույն են ստանում», սողդ. *ryš* «շառատագույն, թուխ կարմիր՝ սևին տվող կարմիր նժույգ», իրզմ. *rxšyk* «կարմիրին հարող սրճագույն», վախ. *raks* «մոխրագույն, սրճագույն»<sup>6</sup>, քրդ. *rahš* «դեղին», *raš* «սև», Ամորեի բրբ. *raš* «բաց կարմիր»<sup>7</sup>, իսկ Դավանի բարբառում այսպէս է կոչվում «սև խաղողը մինչև լրիվ հասունանա-

<sup>2</sup> «Աստվածաշունչ, Ջաքարիայի մարգարեությունը», Գլուխ Ա, էջ 4059:

<sup>3</sup> Ղևոնդ Ալիշան, Չին Հասարկ կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 158:

<sup>4</sup> Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 108:

<sup>5</sup> Bailey H., Dictionary of Khotan Saka, London, 1979, p. 362.

<sup>6</sup> Стеблин-Каменский И. М. Этимологический словарь ваханского языка. СПб., 1999, с. 293.

<sup>7</sup> \*Adelxāni H., Farhang-e Āmore, Ārāk, 1380/2001, j. I, s. 58.

լը»<sup>8</sup>: *Երաշխ* բառամիավորին անդրադառնում է նաև Լ. Հովհաննիսյանը՝ նշելով, որ «*երաշխ, զարտակ, ճարտուկ, ճերմակ*» բառերը գործածված են լոկ մեկական անգամ, այսինքն՝ հաճախականության տեսակետից տարբերվում են հիմնական գունանուններից<sup>9</sup>: Բացի դրանից, սրանք դրսևորում են գործառական բնույթի մեկ այլ սահմանափակություն՝ արտահայտելով միայն ձիու գույն: Պարսկերենում *raxš*<sup>10</sup> ձիանունը նույնպես հանգում է այս ձևին: Եզրը վկայում է նաև Գևորգ Դպիր Պալատացին՝ «...և ասին թե հատուկ երիվարն Տիսթեմայ՝ էր կարմրեքանգ, և ունէր պիսակս սպիտակ ՚ի վը իւր, և ՚ի բազում գործածութեքառս Ռախշ՝ բացարձակապես նշ՝ երիվար»<sup>11</sup> (էջ 459), և Գրիգոր Մագիստրոսը՝ «*Բսկ ուն մերձ առ Դաբաւանդն կոչեցեալ լեառն, Ռոստոմն կոչեցեալ Սաճիկ, երիվար նմա ունել ասի Ռաշ այսինքն՝ աշխեն*»<sup>12</sup>:

Վրացերենի *րախսի* «աշխետ ձի» եզրը նույնպես իրանական ծագում ունի: Հր. Աճառյանը բառի ուղիղ մեկնությունը տալիս է Ք. Պատկանյանին: Նշենք, որ պարսկերենում բառը «ձի» նշանակող առանձին միավոր է համարվում՝ պիլ. *šēt-vars* «կարմրահեր», պրս. *šēd-asp* «աշխետաձի, աշխետ ձիերով» (Ֆիրդուսիի «Շահնամե»-ում այսպես են կոչել Ջամշիդի թոռան Տուժի որդուն), հմմտ. պրս. *šedāna* «յունապ, դժնիկ, զսպենի» (այսպես է կոչվել շիկակարմրավուն գույնի պատճառով), *šeydax* «մատակախազ ձի», քրդ. *šī* «աշխետ», *hesp-i- šī* «աշխետաձի»<sup>13</sup>:

Գրաբարում *ասսպ* «ձի» (ԲՀԼ, I, 122) բառամիավորն անկախ կիրառությունն չունի կամ էլ նման տարբերակ մեզ չի հասել<sup>14</sup>. «...է բառ պարսկական, և նշանակէ ձի կամ երիվար և ի գործ ածի՝ բարդութիս բառից, տաչ. աթ, պարս. էսպ» (ՆՀԲ, I, 315): Եզրը ՆՀԲ-ից առաջ ուղիղ իմաստով մեկնել է Գևորգ Դպիր Պալատացին<sup>15</sup>: Հր. Աճառյանը գրում է, որ բառն առանձին գործածված չէ, հանդիպում է միայն մի քանի բարդություններում (ՀԱԲ, I, 270), որոնք հայերենում ոչ թե անկախ կազմված բառեր են, այլ ուղղակի ամբողջովին փոխառյալ: Նշված ձևույթը մասնավորապես հանդիպում է, և բավականին հաճախ, որպես բաղադրիչ *ասպազէն, ասպաստան, ասպաղոլ կամ ասպայուլ, ասպաճարակական, ասպանդակ, ասպաստանիկ, ասպատակ, ասպարեզ, ասպետ* բառերում և դրանցից կազմված բարդություններում, որոնք բո-

<sup>8</sup> Salāmi 'A., Guyeš-e davāni, Tehrān, 1381/2002, s. 259.

<sup>9</sup> Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 108:

<sup>10</sup> *Raxš* էր անվանվում Աբուլ Ղասեմ ֆիրդուսիի «Շահնամե» ստեղծագործության հայտնի դրուցազն Ռոսթամի նժույգը. «...*hami raxš xānim va bur abraš ast, be xu ātaši va be range ātaš ast...hēnēg Ṛaḫš kōčēnēp ayē hēteḡēn dāhōn, nēp kēnēkōn tē և kēnēkē gōyē nōh...*» (Ferdowsi, A., Šāhnāme, Tehrān, 1361/1982, j. I-II, s. 256):

<sup>11</sup> Գևորգ Պալատացի, Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից, ի Կոստանդնուպոլիս, 1826, ՌՄՀԵ, էջ 95 (այսուհետև՝ ԳՊ):

<sup>12</sup> Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 126:

<sup>13</sup> Հ. Հյուբշման, Հայերենի քերականություն, I մաս, Եր., 2003, էջ 101:

<sup>14</sup> Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 129:

<sup>15</sup> Տե՛ս ԳՊ, էջ 95:

լորն էլ փոխառություններ են իրանականից՝ մպրս. *asp* > հպրս. *\*aspa-* «ձի»<sup>16</sup> և պահպանում են *ասպ-ի* նախնական՝ «ձի» բառիմաստը՝ անկախ հետագա իմաստային զարգացումներից<sup>17</sup>:

Հայերենում «ձի» նշանակող բառերի շարքում է հանդիպում նաև *բաշահատ* (ՆՀԲ, I, 438) եզրը՝ «*ձի, որոյ բաշն է հատեալ...*»: Այն հայ մատենագրության մեջ երկու անգամ է գործածված. Գրիգոր Մագիստրոսը՝ «մտրուկ»-ի հոմանիշների շարքում. «*Եւ չէգորն, որայիսի քուռակ, բաշահատ, մատաղաձի*», և Հովհաննես Երզնկացին (ՆՀԲ, I, 438; ՆԱԲ, I, 410): Եզրը դասվում է հայերենի ա հոդակապով իսկական բարդությունների շարքին՝ կազմված *բաշ, բարշ* (հյ. ունենք «երկայնաբաշ» (ՄԲ, 274))՝ «... *Վարսք մանաւանդ կենդանեաց, և ձիոյ...*» (ԲՀԼ, 136; ՆԲՀ, I, 438) և հատ (անել) ձևություններից: Բառը պիլ. *barsš* ձևից է < հիր. *\*brša-* «բաշ», Ավստ. լ. *baršā-* «ձիու վիզ կամ կոնակ», հմմտ. բլջ. *bušk* «ձիու բաշ», աֆղ. *vraž*, օս. *barze, bärz* «վիզ»: Ասենք, որ հայերը սովորություն են ունեցել մինչև երեք տարեկան քուռակի բաշը խուզել, որից հետո բաշը թողնում են: Պարսկերենում նույնիմաստ ձիանուն չկա:

Միջին հայերենում **գորգզան** բառը «գայլի վազք ունեցող (ձի)» նշանակությունն է ունեցել (ՄՀԲ, էջ 148): Եզրը հիշատակվում է միջնադարյան «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» (ԺԳ դար) հայերեն ձիամատյանում<sup>18</sup>: Բառանունն ունի թափանցիկ կառուցվածք՝ պրս. *gorg* «գայլ» < հիր. *\*vrka-* > մպրս. *gurg*, հմմտ. սնսկրտ. *vrka-* «արու գայլ», *vrki* «էզ գայլ», *vrka-dvaras* «գայլի նման վազող» և պրս. *zadan* «խփել» բայի ներկայի *zan-* հիմքից, այսինքն՝ «գայլի նման քայլ գցող (խփող)», պրս. *qadam zadan* «քայլել», հմմտ. պրս. *pa(e)y-zan*՝ «ոտքը գցող ձի, կաղ ձի»: Եզրը միջ. հայերենում կազմում է նաև *գորգզալ* «գայլի նման վազել (ձիու վազքի ձև)» և *գորգզացնել* «գայլի վազքով ձին վարել» բայերը: Ասենք նաև, որ միջ. հայերենում ձիու իմաստային հոմանիշն է *մղայնէխ* եզրը. «*Եւ կայ, որ գորգզայ ու զշինքն զխտվն ի հետ ի դոհաց դեհ ձգէ և ասէ իր յարապն մղայնէխ*»<sup>19</sup>:

**Երագաձի** բառը Նոր հայկազյան բառարանում «արագընթաց ձիու» իմաստն է արտահայտում (I, 665): Եզրը բարդություն է՝ կազմված «*երագ, արագ*» < պիլ. *rag*, սնսկրտ. *rahm* «շտապել, վազել», *raghú* «արագ, խիստ»<sup>20</sup>, հմմտ. Ավստ. լ. *rayu-* (ար.), *rævī-* (իգ.), մպրս. *ray*<sup>21</sup>, ժ. իր. լեզուներից՝ քերմ. *reng*, աշթ. *regvār* «ուժեղ անձրև», հմմտ. ժպրս.

<sup>16</sup> **Հ. Հյուրշման**, նշվ. աշխ., էջ 108: Այս մասին տե՛ս նաև **Hasandust M.**, Farhang-e rišešenāxti-e zabān-e fārsi, Farhangestān-e zabān o adab-e fārsi, Tehrān, 1393/2014, j. I, s. 190, (այսուհետև՝ FRZF).

<sup>17</sup> Այս մասին տե՛ս **Զարուհի Խաչատրյան**, *Ասպ* «ձի» ձևությոնը հայերենի իրանական ծագման բառապաշարային միավորներում, Կանթեղ, 1(74), Եր., 2018, էջ 60-68:

<sup>18</sup> Տե՛ս «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» (ԺԳ դար), աշխատասիրության Բ. Չուգասյանի, Եր., 1980, էջ 79, 82 (այսուհետև՝ ԲՉԳ):

<sup>19</sup> ԲՉԳ, էջ 80, 82:

<sup>20</sup> FRZF, j. III, s. 1463.

<sup>21</sup> **MacKenzie D. N.**, A concise pahlavi dictionary, London, 1971, p. 70.

*ragbār* (հայերենում՝ *երագ, արագ* բառերը ե կամ ա հավելվածով են կազմված, հմմտ. *երանգ* < պրս. *rang*) և «*ձի*» բառույթներից, այսինքն՝ «արագավագ ձի»: Հայ մատենագրության մեջ եզրը հիշատակում է Մեբեոսը. «*Վաղի առաւատուն ցուցանեն ձեզ փիղս վառս եւ երիվարս տաճիկս եւ երագունս*»<sup>22</sup>:

**Զարտակ** բառը վկայված չէ ՆՀԲ-ում: Հր. Աճառյանը բառամիավորը հիշատակում է «դեղնագույն» նշանակությամբ և բերում *զարտակ (զերդակ)* ձևերը, որը գործածված է «Յայտնության» հին թարգմանության մեջ՝ «*Ահա ձի զարտակ*» (ՀԱԲ, II, 84), և Մ. Խորենացու «Աշխարհացույցում»՝ «*զերդակ ձիով*»<sup>23</sup>: Եզրը հիշատակում է նաև Լ. Հովհաննիսյանը՝ «դեղնագույն» իմաստով (ՀԳԲ, 11): Եզրը *զարտ* «դեղին, դեղնեօրանգ (ձի)» (ՄՀԲ, 199) նշանակությամբ վկայված է նաև միջին հայերենում. «Եւ կա ձի ի բաց դեղին, որ լինի սպիտակգոյն եւ լինի տուբեթն ու բաշն ու ազին սպիտակ: Եւ կոչէ իր անունն պարսիկ *զարտ*»<sup>24</sup>: Նշենք նաև, որ հայերենում *զարտ* բառամիավորից ունենք *զարտագոյն, զարտագուն* բառանունները՝ «ներկի համար գործածված մի տեսակ դեղին ծաղիկ կամ քրքում» նշանակությամբ: Միջին հայերենում «դեղնաթույր ձիու» նշանակությամբ է հանդես գալիս նաև *դեկնայխայտ* (ՄՀԲ, 164)՝ «*դեղին խայտուցներով ծածկված (ձիու մասին)*» բառամիավորը. «Եւ կայ (ձի) դեղին դեկնայխայտ, որ լինի յիր մարմինն իր գոյնովն բոլոր բոլոր զեղ դեկնի»<sup>25</sup>: Բառամիավորը հանգում է հին իրանական \**zarta-*<sup>26</sup> > մայրս. *zart-*<sup>27</sup> *zar* «փայլել, լուսարձակել, ճառագայթել» արմատին: Եզրը *zarde* տարբերակով վկայված է պարսկերենում՝ 1. դեղնաթույր ձի, 2. դեղնաթույր ձի, որի բաշի, պոչի, ազդրերի, աչքերի և շրթունքի վրա սև նշան կա:

Գրաբարում հիշատակված իրանական ծագման ձիանուններից է նաև **ճարտուկ** բառանունը՝ «*ազգ ճերմակ ձիոյ՝ խառն ընդ մոխրագունի և պիսակոտ ճանճկենի*» (ՆՀԲ, II, 177), «բաց մոխրագույն, խայտագորշ (ձիու գույնի մասին)» (ԳԲ, II, 126; ԳԲԲ, 221), «ճերմակ՝ բաց մոխրագույն ձի, բծավոր, աշխետ» (ԳԲԲ, 221) իմաստներով:

Հայ մատենագրության մեջ ձիանունը հիշատակում են Փ. Բուզանդը (Տիրան արքայի ձին). «... *Օ այնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային Տիրանայ...: Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն. սա լի էր քաջութք...*», «...*Ձնոյն կերպարանս ճարտուկ վ ճանճկէն գտեալ, առ իշխանն յԱտրպատական առ Վարագն արձակէր*»<sup>28</sup>, և Կիրակոս Գանձակեցին: Հր. Աճառյանը բառամիավորը հանգեցնում է պիլ. *čartuk* «մուգ

<sup>22</sup> Մեբեոս, Պատմութիւն Մեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Եր., 1939, էջ 25:

<sup>23</sup> Մովսէսի Խորենացոյ, Աշխարհացոյց, Վենետիկ, 1881, էջ 46:

<sup>24</sup> ԲԶԳ, էջ 56:

<sup>25</sup> ԲԶԳ, էջ 56, 59:

<sup>26</sup> Horn P., Grundriss der neupersischen Etymologie, Strassburg, Verlag Von Karl. J., Trübner, 1893, p. 146.

<sup>27</sup> Nyberg H. S., A Manual of Pahlavi, II, Glossary, Wiesbaden, 1974, p. 230.

<sup>28</sup> Փաւստոսի Բիւզանդացոյ, Պատմութիւն Հայոց, Ի Վենետիկ, 1832, էջ 49, 50:

շագանակագույն, կարմիրին հարող ճանճկեն ձի մուգ» բառանվանը (ՀԱԲ, III, 194): *Čarde* եզրը ժպրս. «մուգ կարմիր ձի, պուտերով կարմրաթույր ձի, նաև մուգ կարմիրին հարող շագանակագույն պուտերով ձի, կարմիր երանգ, թխակարմիր (ձիու մասին)»<sup>29</sup> նշանակությամբ է հանդես գալիս: Ասենք նաև, որ բառամիավորը հատուկ թույր է միայն ձիու և գրաստի համար:

**Ճերմակ** բառանունը (առանց վկայության) «1. սպիտակ գույն (ձիու գույնի մասին), 2. սպիտակ ձի» իմաստներով հանդիպում է ՆԲՀ-ում՝ «առաւել ասի գսպիտակ ձիոյ» (II, 180) և գրաբարի մյուս բառարաններում (ԳԲ, II, 128; ԳԲԲ, 221): Դասական մատենագրության մեջ «Ճերմակ» բառը գործածում է միայն Բուզանդը՝ երեք անգամ. «*Եւ էր...երիվարն Մուշեղի Ճերմակ ձի մի*», «*Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ Ճերմակաւն*», «*Ճերմակաձին գինի արբցէ*»: Ըստ Լ. Հովհաննիսյանի՝ «Ճերմակը» կիրառության որոշակի ոլորտ ունի, այն արտահայտում է ոչ թե «սպիտակ գույն» հասկացությունն ընդհանրապես, այլ միայն ձիու գույն<sup>30</sup>: Հայ մատենագրության մեջ «սպիտակաթույր ձիու» նշանակությամբ հանդիպում են նաև հետևյալ օրինակները. *Ճերմակաձի*՝ «սպիտակ ձիեր հեծնող», *Ճանճաճերմակ*՝ «*Ճանջաճերմակ և սալասմբակն երիվարաւ...*»<sup>31</sup>: Այս ձիանուններում գունեզրը կիրառվել է մեկ անգամ՝ միայն ձիու գույն իմաստով (ԲՀԼ, 180) և, ինչպես նշեցինք, *աշխէտ, երաշխ, զարտակ, ճարտուկ և Ճերմակ* բառերը, ունենալով սահմանափակ գործածություն, սկզբնապես վերաբերել են որոշակի առարկայի<sup>32</sup>: Ուստի գունանունը, փոխառու լեզվում ունենալով այդ նշանակությունը, հայերենին է անցել միայն ձիու գույն իմաստով: Հր. Աճառյանը եզրը հանգեցնում է պիլ. *\*čermak* ձևին, հմմտ. պրսկ. *čarme*: Գ. Ջահուկյանը նույնպես դա իրանական փոխառություն է համարում (ՀԱԲ, I, էջ 492): Պարսկերենից է փոխառնված նաև վրացերենի *ճարմակի ցիւենի*՝ «Ճերմակ ձի» անվանումը (ՀԱԲ, III, 198):

Ժամանակակից պարսկերենում հանդիպում է *čarme*՝ 1. ձի, 2. սպիտակամազ նժույգ, 3. արծաթափայլ ձի, 4. սպիտակամազ ավանակ և ջորի բառանունը<sup>33</sup>:

**Մատակ** բառամիավորը ՆՀԲ-ում (II, 212) և Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան»-ում (II, 149) ունի «էզն կենդանեաց» նշանակությունը: Հր. Աճառյանը բերում է բառից կազմված բարդություններն իրենց վկայումներով՝ *մատակախազ < mātak (a)- xvāz 'հմմտ. մպրս. xvāstan (hvāz-)*

<sup>29</sup> Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 532:

<sup>30</sup> Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 202:

<sup>31</sup> Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», էջ 122:

<sup>32</sup> Տե՛ս Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 109:

<sup>33</sup> Տե՛ս Seyyedmohammad 'A., Farhang-e Nezām, Enteshārāt-e dāneš, Tehrān, 1362/1999, j. I, s. 449 (այսուհետև՝ FNZ); Dehxodā 'A., Loyatnāme-ye Dehxodā, Tehrān, Mousese-ye enteshārāt o čap dānešgah-e Tehrān, j. I, 1372/1993-94, j. V, s. 7126 (այսուհետև՝ LD):

«ուզել, խնդրել, պահանջել», մատակախագութիւն և մատակցան (III, 266): Եզրը հանգում է պիլ. *mātak* «մատակ» բառին, որը կազմված է *māt* «մայր» և *-ak* գոյականակերտ ածանցից, հմմտ. պրթ. *mādag*, օս. *madæl*, փշթ. *māndina*, *māyna* «կին, գույգ», քրդ. *mādek* «էգ գումեշ», աշթ. *māda*: Նույն արմատին է հանգում նաև գրաբարում վկայված *մատեան* «մատակ ձի, զամբիկ» (ԱԲ, 542; ՆՀԲ, II, 213; ԳԲ, II, 150; ՀՄԲ, 513) բառամիավորը, որը Հր. Աճառյանը հիշատակում է Գ. Մագիստրոսի և Հ. Երզնկացու մոտ՝ հոմանիշների շարքում. «Ձիոյն իգականքն՝ մատեան, զամբիկ, ճայիկ»: Բառամիավորը հանգում է պիլ. *matyān* «էգ ձի» բառին, հմմտ. ժպրս. *mādyān* «մատակ ձի, զամբիկ», փրչ. *madiān*, վախ. *madāx*, բլջ. *mādyān*, *mādin*, *māzin*, բխթ. *māyūn*, *muhō(n)*, թաթ. (հյուս.) *moiru*, գուր. *main*, հյ. մատակ, մադիան, մատյան՝ «էգ ձի» և այլն:

**Սամանդ**՝ «սև բաշով ու պոչով ձի» նշանակությամբ եզրը վկայված է միջին հայերենում (ՄՀԲ, 683): Այն հիշատակվում է XIII դ. հայերեն ձիու բժշկարանում. «Եւ կան ձիաննին, որ կոչեն *սամանդ*. և իր գոյնն է սևգոյն դեղին...», «և կայ դեկնախայտ սամանդ և կարէ լինել, որ քանձ դեկնի այլ մեծ մեծ, բոլոր բոլոր կենայ ի յիր մարմինն իր գոյնովն և ազին, որ նմանէ ի բաց թուխ...»<sup>34</sup>: Բժշկարանում հանդիպում է նաև «*սամանդ յատասի*» ձիանունը՝ «...որ թարգմանի սպնախայտ սամանդ»<sup>35</sup>, հմմտ. ժպրս. *samand-e adasi* «ոսպի նման կետերով, ճանձկեն, պիսակավոր ձի»: Հարկ է նշել, որ հայերենում վկայված ձիանվան իմաստն ամբողջովին տարբերվում է ժամանակակից պարսկերենում հանդիպող *samand*՝ 1. դեղնաթույր, ոսկեդեղին թույրով ձի, 2. մոխրագույն ձի (ԳԴ, 476), 3. ձիու դարչնագույն, դեղնավուն թույրը (LD, VIII, 12134; ԲԱ, 758<sup>36</sup>; FM, II, 1921<sup>37</sup>) բառամիավորի նշանակությունից: Ժամանակակից պարսկերենում հանդիպում է նաև *samand-e barqraftār* «կայծակի նման սրընթաց ձի» (FNZ, III, 1936) նկարագրական բարդությունը:

**Սեալ** (ՆՀԲ, II, 704; ԳԲ, II, 454) բառամիավորն առաջնային իմաստով գունանուն է: Հր. Աճառյանը նշում է նաև բառի «թանաք, մելան» նշանակությունը (ՀՄԲ, IV, 195): Հայերենում եզրը փոխանունությամբ ունի «սև ձի» իմաստ: Հարկ է նշել, որ հայերենում հիմնական գունանուններից սևը, լինելով իրանական փոխառություն և սկզբնական շրջանում ունենալով կիրառության նեղ շրջան, վերաբերել է որոշակի առարկայի<sup>38</sup>: Սևուկ էր կոչվում հայոց Արտաշես արքայի ձին. «Հեծաւ արի արքայն Արտաշէս ՚ի սեաւն գեղեցիկ...»<sup>39</sup>: Աստվածաշնչում ձիու

<sup>34</sup> ԲԶԳ, էջ 56:

<sup>35</sup> ԲԶԳ, էջ 59:

<sup>36</sup> **Amid H.**, Farhang-e fārsi-e 'Amīd, Mousesse-ye entešārāt-e Sakke, Tehran, 1388/2009 (այսուհետև՝ ԲԱ).

<sup>37</sup> **Mo'in M.**, Farhang-e fārsi-e Mo'in, Tehrān, Mousesse-ye entešārāt-e Amīrkabīr, 1977, 4 j. (այսուհետև՝ ԲՄ).

<sup>38</sup> Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 113:

<sup>39</sup> Մովսիսի Խորենացույ, Պատմութիւն Հայոց, Տիփլիս, Գիրք 2, Ծ, 1881, էջ 190:

վեց վկայություններից երեքը ևս վերաբերում են սևաթույր ձիուն: Բառանունը հայերենին է անցել պարթևերենից՝ \**siyāv*, որի նախաձևն է \**k'jēyá-* \**kjē-* արմատից՝ «մութ կամ մուգ գույնի, մուգ սրճագույն», հայրս. \**siyāva*, մարս. *siyā* «սև, մուգ գույն», սողդ. *s'w* «սև», իրզմ. *s'w* «սև» և այլն: Ասենք նաև, որ պարթևերենում բառի հոմանիշ գույզն է եղել *šāv* բառանունը, որից էլ փոխառյալ են վրց. *շավի* «սև» և հյ. \**շաւ* ձևերը, որը պահված է *Շաւարշ* և *Շաւասպ*<sup>40</sup> հաստուկ անունների մեջ: *Siyāh* բառամիավոր պրս. ունի «սևաթույր ձի, ամբողջովին սև ձի կամ թխաթույր ձի» իմաստները:

Գրաբարում **տաճիկ** եզրը ունի «արաբ, հազարացի» իմաստը, ինչպես նաև «արագավազ» նշանակությամբ մակդիր է համարվում «ձիու և ուղտի» համար (ՆՀԲ, I, 842; ՄՀԲ, II, 538; ԳԲԲ, 343): Բառի վկայությունները հանդիպում են հայ մատենագրության մեջ. «...*բայց միայն Մերուժանն ՚ի տաճիկ ձի նստեալ փախչէր*»<sup>41</sup>, «...*Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ի քաւղէիցն, տաճիկ ուղտուք արձակէ ի Հայս արս զհողոյ և զջրոյ...*»<sup>42</sup>, «...*վաղիւ առաւաւտուն ցուցանեմ ձեզ փիղս վառս եւ երիվարս տաճիկս եւ երագունս*»<sup>43</sup>: Չիու ազնվացեղ լինելու մասին է վկայում նաև XII-XIII դդ. արաբերենից անհայտ հեղինակի թարգմանած «Գիրք Վաստակոցը». «*Չհաստատված տաճիկ ձին այսպէս ճանաչեա՞... և զհասն տաճիկ ձիոցն սահմանն*»<sup>45</sup>: Հարկ է նշել, որ Լ. Հովհաննիսյանը գրաբարում բառանունը հիշատակում է նաև *տաճկաձի* ձևով՝ «արագավազ ձի, արաբական ձի, այդպիսի ձիեր հեծնողներ»<sup>46</sup>: Բառը միջին հայերենում ունի նաև «մահմեդական, արաբական և արաբերեն» իմաստները (ՄՀԲ, 744): Եզրը հայերենում փոխառություն է պահլավերենից՝ *tāčik* (\**taik/č-* «վազել») (ՀԱԲ, IV, 365)<sup>47</sup>, «Միջագետցի արաբ. 2. արաբական, 3. արագավազ» նշանակությամբ: Հայերենում նույն արմատից են նաև *թագել և թագել* բայերը՝ «վազել, արշավել» (ՆՀԲ, I, 790; ԳԲ, I, 475) իմաստով, որի ճիշտ մեկնությունը տալիս է Հր. Աճառյանը՝ հղելով ՆՀԲ-ին (I, 790) և «Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական» բառարանին<sup>48</sup>: Պարսկերենում նույն ձիանունն է *tāzi* եզրը, որի

<sup>40</sup> Շավասպ անձնանունը արական է, որը հանգում է միջին հոանական \**šāvāsp* < Ավստ. \**Syāvāspa*- հաստուկ անվանը, որը կազմված է \**syāva*՝ «մութ կամ մուգ գույնի, մուգ սրճագույն» և *āspa* «ձի», այսինքն «սև մատակներ ունեցող», հմմտ. Շավարշ, Շավարշան (այս մասին տե՛ս ՆՀԲ, հ. IV, էջ 155; FRZF, j. III, s. 1800):

<sup>41</sup> Փաստոսի Բիզանդացոյ, Պատմութիւն Հայոց, Ի Վենետիկ, 1832թ., 4-րդ դպրութիւն, Գլուխ ԽԷ, էջ 157:

<sup>42</sup> Նույն տեղում, 4 -րդ դպրութիւն, Գլուխ ԾԴ, էջ 165:

<sup>43</sup> Մեքեոս, էջ 25:

<sup>44</sup> Գիրք Վաստակոց, Վանք Մխիթարայի Ս. Ղազար, 1877, էջ 198:

<sup>45</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 548:

<sup>46</sup> Գիրք Վաստակոց, էջ 203:

<sup>47</sup> Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր, էջ 271:

<sup>48</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ. էջ 548:

<sup>49</sup> Տե՛ս Հայր Մանուէլ վարդապետ Ջախջախեան, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, 1837, էջ 557:

հնարավոր բացատրություններն են՝ 1. հանգում է պիլ. *tāzhīk*, մպրս. *tāčīk*, ժպրս. *tāzi* «արաբ, արաբական» ձևերին, որ *\*tāy-čīk-* նախաձևից է (արաբ. طي *tai* ցեղանունից *čīk* վերջածանցի կցմամբ), այսինքն՝ «արաբական, դրան պատկանող», հմմտ. հյ. «տաճիկ»<sup>49</sup> բառի հետ: Հաջորդ բացատրությունը կապված է ժպրս. *tāzi/ tāzande* «վազող, ասպատակող» բառաձևի հետ, *tāxtan* «վազել, ասպատակել»՝ *tāz-* ներկայի հիմքով, որը հանգում է հիր. *\*tāk-* «վազք, վազել, ասպատակել» արմատին<sup>50</sup>:

**Փալանիկ**՝ «մեջքին փալան դնելու՝ բեռնակիր կամ լծկան ձի, ջորի» (ԳԲ, II, 588; ՀԳԲ, 280): Բառամիավորն առանց վկայության հանդիպում է ԱԲ-ում՝ «անդրուար» նշանակությամբ (Էջ 803): ՀԱԲ-ը բառի վկայությունը բերում է Գ. Մագիստրոսից՝ ձիու վերաբերյալ հոմանիշների շարքում. «Զիոց չեզոքն, որպիսի քուռակ, բաշհատ, մատաղաձի, խեշակ, դզի, բոչոյ, անդրավար, փալանիկ» (IV, 470): Հր. Աճառյանը եզրը հանգեցնում է պրս. *pālāni*՝ «1. ոչ ազնվացեղ ձի, դանդաղաշարժ ձի, 2. գրաստ, բեռնակիր ձի, 3. համետելու հասած ձի, թամբած ձի» բառամիավորին՝ կազմված *pālān* «փալան» բառից: Նշենք, որ բառանունը պարսկերենում ունի նաև «համետելու տարիքի հասած ավանակ» (ՀՄ, I, 228) իմաստը: Զիանունը հանդիպում է նաև Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան»-ում (Էջ 280):

**Քուռակ**՝ «ձիու կամ ավանակի ձագ, մտրուկ» նշանակությամբ բառամիավորը հիշատակված է գրաբարում և միջին հայերենում (ՆՀԲ, II, 1012; ՄՀԲ, 816), ինչպես նաև՝ «ձիաքուռակ» (ԱԲ, 519; ՄՀԲ, 447) ձևով: Բառամիավորը հանգում է հիր. *\*kurnaka-* ձևին՝ *kur-* «ծնել, ծննդաբերել» արմատին > մպրս. (*\*kurrak*) *kwlk*, հմմտ. սողդ. *wkwr* «ագական, բարեկամ», իրզմ. *kryk* «մտրուկ», խնս. *kurrā* «ձագ, մտրուկ», սիվ. *kurrū, kurū*, բխթ. *kurra, kur* «տղա», դավ. բրբ. *kor* «նորածին, կենդանու ձագ»<sup>51</sup>, գիլ. (Էնզելիի և Ռաշթի խոսվածքում) *kor* «աղջիկ»<sup>52</sup>, *k'urak* «ավանակի կամ ձիու ձագ»<sup>53</sup>: Ուշագրավ են նաև բառամիավորի իմաստային հոմանիշները գրաբարում՝ *բոչոյ, բոչոյ, խեշակ, մատաղաձի* (ԱԲ, 542; ՆՀԲ, II, 2013):

Այսպիսով, գրաբարում և միջին հայերենում վկայված իրանական ծագման ձիանունների համեմատական քննությունը վեր է հանում երկու լեզուների «ձի» նշանակող առանձին բառամիավորների ընդհանրությունները և կիրառության առանձնահատկությունները: Այս բառամիավորները հայերենի իրանական փոխառությունների ամենաուշագրավ մասն են կազմում, մանավանդ որ դրանցից շատերը հինգերորդ դարի հավաստի և հնագույն վկայություններ են:

<sup>49</sup> Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 86:

<sup>50</sup> St. u. FRZF, j. I, s. 883:

<sup>51</sup> Salāmi 'A., Guyeš-e davāni, Tehrān, 1381/2002, s. 342

<sup>52</sup> Sotude, M., Farhang-e gilaki, Rašt, 1391/2012, s. 244.

<sup>53</sup> Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 258:

Բանալի բառեր – գրարար, սիջին հայերեն, ձիանուններ, իրանական, փոխառություն

**ЗАРУИ ХАЧАТРЯН – Некоторые наименования лошадей иранского происхождения в древнеармянском и среднеармянском языке.** – Наименования лошадей иранского происхождения, использованные в древнеармянской и среднеармянской литературе, составляют примечательную часть иранских заимствований. Древнеармянская литература даёт достоверную и достаточную информацию об иранских наименованиях лошадей. Следует отметить, что в древнеармянском количество этих наименований больше, чем в среднеармянском, где оно заметно снижается.

В древнеармянском и среднеармянском словарные единицы *աշխէտ, երաշխ, ասի, ասիաստանիկ, բաշահատ, բոշոյ, գորգան, երագաձի, երիվար կամ երիւար, գարտակ, ճարտուկ, ճերմակ, մատակ, մատեան, նժոյգ, սեակ, քահվար, սաման, տաճիկ, փալանիկ, քուռակ* представляют собой наименования лошадей иранского происхождения. Сравнительный анализ разъясняет сходства и особенности их употребления в двух языках.

**Ключевые слова:** древнеармянский, среднеармянский язык, наименования лошадей, иранские заимствования, этимология

**ZARUHI KHACHATRYAN – On the Etymology of Some Iranian Horse Names in Old Armenian (Grabar) and Middle Armenian.** – The Iranian horse names are the most interesting and important part of Persian borrowings in Armenian, especially because many of them are reliable and ancient evidence of the fifth century.

In Grabar, the bibliography provides enough information about the horse names that have Iranian origin. It is worth mentioning that these horses are more common in Grabar than middle Armenian, where the number of them is decreasing obviously.

In Grabar and Middle Armenian we encounter with these names for horses: Ashkhet, Yerashkh, Asp, Aspastanik, Bashahat, Bochoy, Gorgzan, Yeragadzi, Yerivar, Zartak, Jartuk, Jermak, Matak, Matyan, Nzhuyg, Seav, Rahvar, Samand, Tajik, Palanik, Kurak, which are Iranian in their origin, and the comparative examination of them is based on the common features of the two languages and their application features.

**Key words:** Grabar (Old Armenian), Middle Armenian, Horse Names, Iranian borrowings, Etymology

Ներկայացվել է՝ 12.12.2018, գրախոսվել է՝ 04.02.2019, ընդունվել է տպագրության՝ 07.03.2019